

ԱՐՏԱՍԱՅՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

ՀԻՒՍԻՈՍՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ԵՎԱՆԳԻՆԵՐԸ ԵՒ ԺԱՄԱՆԱ-
ԿԱԿԻՑ ԱՄԵՐԻԿԱՅԻՔ 1.

Ի՞նչպէս են առաջ եկել ու կազմել ամերիկական նոր քաղաքները, Եւանկիւնները և գաղթականները, Հացի քաղաք—Միննէապոլիս, Հանքի քաղաք—Դենւեր, Մսի քաղաք—Չիկագո:

Աչքի առաջ ունենալով «Մուրճ»-ի սուղ էջերը մի կողմից, միւս կողմից անհնարաւորութիւնը խօսել ալն բոլոր հասարակական երևույթների մասին, որոնք ամեն օր տեղի են ունենում մեր երկրից դուրս,—մենք ստիպուած ենք «Մուրճ»-ի արբանուստ կանգ առնել առաջում ալն կէտի վրա, դէպի որը լաւած են ամենքի աչքերը, Այդ կէտը Չիկագո՛ի համալսարանին ցուցահանդէսն է և դրա հետ միաժամանակ Ամերիկան և Միացեալ Նահանգները:

I

Ի՞նչպէս են առաջ եկել, մեծացել, կազմել, ամերիկական քաղաքները և որոնք են ալն տարրերը, որ ալդ գործում դեր են կատարել և շարունակում են կատարել:

Արեւելեան Ամերիկան—Միսիսիպի գետի աջ կողմը, ուր ալդ երևույթը դեռ շարունակում է ալսօրւան օրս—ներկայացնում է մի ահագին տարածութիւն, որի վրա քաղաքները շարունակում են բուսնել օր ըստ օրէ: Ամերիկալի ալս մասում կարելի է գտնել ամերիկական հասարակութեան սկզբնական տարրերը. ալլացեղ եւրոպական գաղթականներ, քաղաքական փախստականներ, վտարականներ, զժգոհներ և թշուառներ, բախտի հետից ընկած գերդաստանի կրտսեր ներկայացուցիչներ, եւրոպական հասարակութիւնից չը գնահատուածներ, կուսական երկրում բաղդ

¹⁾ Ըստ նորագոյն աղբիւրների և լօղւածների զանազան ամսագիրների՝ Revue des deux Mondes, Nouvelle Revue, Русская Мысль, Северный Вѣстникъ, Наблюдатель, և ալն՝ ամենը 1892 թւականի:

որոնող բազդախնդիրներ, որոնք գալիս են մշակելու կուսական անտառները, ալրելու տափարակները և առաջին ակօսները գցելու կուսական հողի վրա: Արեւելեան Ամերիկայումն է գտնուում այն սկզբնական հում նիւթը, որը լետող մշակելով հարստութիւն է կազմում ամբողջ երկրի համար: Ալտեղ—այս ազգային մեծ գործարանի մէջ են հաւաքուում երկրի բոլոր արդիւնաբերութիւնների բոլոր տեսակները:

1891 թ. սեպտեմբերին Միացեալ Նահանգների նախագահը տեղացի հնդկիկների հետ բանակցելուց լետող՝ ազատ հրատարակեց Ամերիկայի այս մասը գաղթականութեան, կոտորելուցիցի ազատ համար: Տեսնելու և ներկայ լինելու օր էր՝ ձիշտ ժամի 12-ին թնդանօթը աւետեց անհամբերութեամբ սպասած բոլորին: Խոնավ ալլացեղ ամբոխը հէնց սրան էր սպասում և խոկոյն ալէկոծուող ծովի ալիքների նման առաջ դնաց պատուելով իրա դէմ դրած պատնէշը... Ոտով, ձիով, կառքով առաջ է վազում ամբոխը իրար հրհրելով—հողի մի լաւ կտոր ձեռք բերելու համար: Մինչև երկուցեան մուտք ամեն մէկը ունէր իրա համար ձեռք բերած մի կտոր հող: Գիշերը լուսացնում են վրանների տակ: Առաւօտեան երեսն են գալիս պատրաստ փայտեալ տնակներ, ապա սղոցած ախտակներէց կրպակներ, մի քանի աչն տեսակի ամերիկական խանութներից (épicerie), ուր ծախուում են՝ թամբաքու և ձիու թամք, կացին և շաքար: Վեց շաքարից լետող երկաթուղին անցնում է այս տափարակով, բուսնում են կալարաններ, սոցա կից էլեւատորներ, ուր ամբարւած հացը հեռագրական պատւէրների է սպասում երկաթուղով փոխադրելու համար Արևմտեան Ամերիկան: Էլեւատորների շուրջը գետեղւում են՝ մի բանկ, մի եկեղեցի և ապա էլեւտրական զօրեղ լուսը լուսաւորում է նորածին քաղաքի 20 փայտեալ շինութիւնները և շրջակայ կանաչ տափարակը:

Ներկայումս՝ եթէ աչքի առաջ ունենանք նպաստող երկաթուղային գծերը, հացի լաւ բերքերը, մի վեց ամսուում վիշեալ 20 փայտեալ աների փոխարէն կը գոյանալ մի փոքրիկ քաղաք, ուր երկրագործական գործիքներ առնելու համար կզան շրջակալ գիւղերի Ֆերմերմերը, մի երեսուսէն տարոււմ աչք փոքրիկ քաղաքը կզառնալ մի մեծ քաղաք՝ ալիւրի մի լաչնածաւալ վաճառանոց՝ նման Saint—Paul'ին, նման Minneapolis'ին, կամ կը դառնալ մի մեծ մսի քաղաք՝ նման Չիկագոյին, ուր միլիոն աւոր կովեր և խողեր գտնոււմ են իրանց վախճանը:

Այս տափարակ անասնաման տարածութեան վրա տեղ տեղ երևում է մի մեծ քառանկիւնի շէնք՝ դա ունչմենի կամ հողագործի ամեն լարմարութիւններ ունեցող տունն է: Տան շուրջը գտնոււմ են ակտուններ, սպասաններ, գրասենեակներ, գործարաններ, ուր աղացւում է եգիպտացորենը անատուններին կեր լինելու համար: Ահա և տէրը—մի կատարեալ

ջենալմէն¹⁾, որ շատ լաճախ մի նախկին համալսարանական է: Իւր կնոջ կողքին, որ ստէպ ածում է Շոպենին, նա հաճատանում է՝ օրօրելով իւր ռոկիւնի²⁾ մէջ և ծխում իւր սիգարը, կամ տելեֆոնի օգնութեամբ առնում է մի վազոն երինջ տան առջև ծածկած ճմնելիքում զբօսնելիս:— Սա մի հաւատարիմ նմուշ է կազմող տեղական ազնւականութեան, հարուստ մի դասակարգի, կրթւած, զարգացած, նախաձեռնող, միշտ հասարակական գործի գլուխ անցնող, ընկերութիւններ կազմող և Նորեկի երին ամերիկական հոգի ներշնչող դասակարգի մի կաղապար, մի նախատիպ:

Աւելի դէպի հիւսիս՝ Միսիսիպի ձորի մէջ—դուք մտնում էք արդէն ցորենի արտերի մէջ, որոնք նմանում են հասկերի անեղբ մի ծովի և որոնց անսպառ հունձերը կերակրում են թէ նոր և թէ հին աշխարհները: Կարերով անմշակ, անարատ մնացած կուսական այս հողը— առատ հունձ է տալիս ամեն մի նորեկ աշխատաւորին: Շատ քիչ են գիտնական հողագործութիւնները:

Այս ագարակները (ֆերմաները) գտնուում են առհասարակ զբանց ստեղծող եանկլիների³⁾ ձեռքին, որոնք միաժամանակ և՛ բանկիրներ են և՛ մշակողներ և՛ երկաթուղատէրեր, և՛ շահադէտներ (СПЕКУЛЯТОРЫ), որոնք, բառիս բուն նշանակութեամբ, հեղեղում են երկրի այս մասը իրանց ազդարարութիւններով, լատարարութիւններով, ռեկլամներով, լրագրերով, որոնց մէջ գովասաններ են շուպլում այդ երկրի «անձրևախառն կլեմպին, բերքերին, վաճառատեղերին՝—չուկաներին» և այս բոլորը աջակիսի ձեռքով, որ կարողանում են գրաւել Նորվեգիացի կամ Սիլեզցի թշառ գաղթականին:

Եւ սոքա՝ այս թշառ գաղթականները՝ Սկանդինաւիայից, Եւրոպայից, Կանադայից, հիւսիսային Գերմանիայից եկածներն են, որ նպաստում են երկրի նաճումին և որոնք հաստատուում են աջակիսի տեղերում, ուր իսկական ամերիկացին միայն ոտ է դնում— փոխել անցնելու համար: Այս գլխից առանց մի կոպէկ վճարելու՝ այդ գաղթականը իրաւունքունի ձեռք բերելու և տէր դառնալու 64 հեկտար հողի՝ վճարելով 5 տարուց ամեն մի կիսամեակին 1100 Ֆրանկ՝ Homestead exemption (усадебный налогъ) կոչող օրէնքի հիման վրա: Հողը այն աստիճան պաղարեր է, արգաւանդ է, երկրագործական գործիքները այն աստիճանի կատարելագործւած են և այնքան հեշտացրած է նրանց ձեռք բերելը վարկի միջոցով, որ երեկուկ գաղթականը—նորվեգիացի նաւատիրի մէկը, վառտաբանի մէկը, «սրճատան» ծառաւորի մէկը այդ հեշտացրած միջոցների

1) Ջենալմին—աղա, պարոն:

2) Rocking—օրօրող (աթոռ):

3) Այսպէս են կոչւում «իսկական» ամերիկացիք:

չնորհիւ՝ հողատէր դառնալուց չետոյ դառնում է և հողագործ և կարողանում է իւր իսկ homestead'ի ¹⁾ վրա հունձներ քաղել տալ:

Հերկուղ հողը ոչ մի գժւարութիւն չի ներկայացնում հերկելիս: Նորեկ գաղթականը—ով ուզում է լինի, թէ սրճատան նախկին ծառայ, թէ գժբարդդացած նախկին խոհարար՝ բաւական է եթէ նա կառավարի զեկը աչն գործիքի, որը ինքը իւր անելիքը անելու է, թէկուզ նրա կառավարողը լինի հողագործութեան մէջ ամենատգէտ մէկը:

Այդ նորեկ գաղթականները ոչ մի աւանդական կապով չեն կապուած իրանց նոր homestead'ի հետ և Ամերիկայում հաւասարապէս դառնում են և՛ հողագործ (Պահտատում), և՛ կաշեգործ (Ձիկագում), և՛ երկաթագործ (Պիտտուրդում), և՛ ոսկեհաններ (Ալալիֆորնիայում):

Սակայն ալս հասարակութիւնը ունի իւր ազնուութիւնը:

Նրա մէջ կալ մի ինչ որ հերոսական ոգի. երբ նա աչքով տեսնում է մի քանի տարւալ մէջ իւր սեփական ձեռքերով կատարածը՝ իւր ցանած դաշտերը, իւր եղների նախիրը, իւր գործարանների ծխնելուղներէ ծուխը... նա զգում է իւր սրտի բարախումը, նա լիքն է գործելու ցանկութեամբ, լիքը քաջութեամբ, վստահութեամբ, և չաղթելու հաւատով:

Հէնց աչն պատճառով որ նրա ամեն մի ձեռնարկութիւնը չաջողութեամբ է պսակուում, որ Նոր-Ալիսարհի հողը նրան առատութեամբ է վարձատրում առանց մեծ խնամք և հոգսեր պահանջելու,—հէնց ալ պատճառով նա արամարում է բնութիւնը և բարձրից նալում նրա վրա: Նրա աչքում Ձիկագո՞ն—հովիտների քաղաք է, Նիու Իօրկը—մալրաքաղաք է, իսկ Ատլանտեան ովկիանոսը ոչ ալ ինչ է՝ եթէ ոչ la mare aux Harengs ²⁾:

Կանաչ տափարակի վրա երեսցող քաղաքները պատահաբար չեն լառաջ եկել. ոչ: Երեք կամ չորս միլիոնատէրեր ընկերացել են և որոշելով երկաթուղու գիծը՝ աշխարհագրութիւն են ստեղծել ու նշանակել ապագայ քաղաքի տեղը: Արտպալին հակառակ, ուր երկաթուղիները կապել են արդէն եղած քաղաքները, ալստեղ—Ամերիկայում իրար հանդիպող երկաթուղու գծերի վրա հիմք են դրել նոր քաղաքներ: Քաղաքներ ստեղծելու գործում՝ լեռներից, գետերից, ձորերից ոչ պակաս զեր են կատարում ամերիկացի «երկաթուղալին թագաւորները»: Սրանցից որ և է մէկը, Վանդերբիլտը կամ Ջէյ Ռուզբը կտրում է ամբողջ Ամերիկան՝ Ատլանտեան ովկիանոսի ամերից դէպի Խաղաղ ովկիանոսի ափը իւր սեփական երկաթուղով՝ պալատ-վագոնի մէջ բաղմած: «Մտնն մի քա-

¹⁾ Արտօնացեալ կտոր հողի չափը=64 հեկտար=160 ալր=59 դեսսեալին: (100 ալր=37 դեսսեալին):

²⁾ Ալս երկու բառերը կարծեօք մենք չունինք հալերէն: Առաջինը նշանակում է ЛУЖА, զիօլ—երկրորդը селедка, հարինդ՝ հիւսիսալին ծովերի մի ձուկ: Հալը կարող էր ստել՝ «տառելխաւոր մի լճակ»:

դաք, ասում է Բրապը, ողջանում է նրան կեցցէններով իբրև մի թագա-
ւորի, որը իւր պետութեան մէջ մի պտուղ է անում. նահանգների կա-
ռավարիչները նրան պատւասիրում են, իսկ սլարամենտները նրան խնդ-
րադեր են ներկայացնում: Եւ նա արժանի էլ է այդ պատւին, քանի որ
այդ երկաթուղալին թագաւորը ինքն է իւր երկաթուղալին գծերի տէրը,
միանձնան իշխանը, որը ոչ ակցիոներներով ժողով է ձանաչում և ոչ օրէնս-
դրութիւն. նա գծում է երկաթուղու գիծը իւր կամքի և քէֆի համա-
ձայն և այդ թագաւորից է կախած ծնւող քաղաքների լաջողութիւնը
կամ մահը, առևտրի շրջանառութիւնը և այլն,—նախած թէ «թագաւորը»
ինչպէս կը բարեհաճի:

Ամենափոքրիկ ծնւող քաղաքը դիւզ չէ, որ առաջ է գալիս մօտա-
կալ բնակիչների խտութիւնից, այլ դա անպատճառ փոքրիկ քաղաք է՝
որ ձգտելու է մրցել հենրի հետ և ժամանակով դառնալ մի Սեն Պօլ կամ
մի Չիկագօ: Այդ փոքրիկ քաղաքները իսկապէս ամբարներ են հանդերձ
գրասենեակներով. Բաղաքի մէջ տեղով ընկնում է ուղղաձիգ փողոցը, որը
սալլապատակելու նեղութիւն չեն կրում: Մի հիւրանոց, մի բանկ, մի «սա-
լոն»¹⁾, մի «չապել»²⁾, մի քանի խանութներ փալտեալ սալարկի
երկարութեամբ—սրանք են այն սկզբնական շէնքերը, որ բռնում են
ուրիշ տներից առաջ: Այդ նորաստեղծ քաղաքը ունի իբրև բնակիչ մի
գերմանացի հիւրանոցատէր, մի վաճառական որ ծախու ունի պատ-
րաստի փոխադրւող ամբարանոցաշէնքեր, պատրաստի դռներ, լուսա-
մուտներ, պատշգամներ, սանդուխներ, մի խօսքով մի տան բոլոր
մասերը սղոցած, ռանդած պատրաստած 2 կամ 3 կաղապարի համեմատ:
Ապա հինգ վեց վաճառականներ, որոնք գաղթականին մատակարարում
են ածուխ, կահ-կարասիք, դործիքներ, սալ, միս, «սոկի շէնք»³⁾, ֆլա-
նել և այլն: Նորեկ գաղթականը, ոչ նման եւրոպացի հողագործին, ձեռք
է բերում այս ամենը իսկապէս թանգ գնով, որովհետև նա ոչ թէ գնում
առնում է այս ամենը, այլ փոխ է վերցնում, այն էլ մեծ տոկոսով: Այս
քաղաքը դեռ չունի գերդաստանաւոր բնակիչներ, պատեղ միայն գործի
մարդիկ են: Ի բաց առեալ շատ չքատր գաղթականներին և չինացիներին՝
ամենքը ապրում են հիւրանոցում: Սկողը եկել է հրապուրելով լատա-
րարութիւններից և իւր գործը տեսնելուց վատու նա չուր է մի այլ տեղ,
մինչգեռ գաղթականը գալիս է ընտանիքով հաստատուելու համար:

Մնւող քաղաքի աղագնակութիւնը, ասում է Բրապը, նորոգ-
ւում է մի քանի շաբթուամի ի՞նչու համար են եկել և ինչու դնա-

¹⁾ saloon—հիւրանոց:

²⁾ chapel—մատուռ:

³⁾ Սրբուղ աթոռ:

ցին այդ բնիկները, Գոքա շահադէտներ են. դոքա եկել էին հողի գինը բարձրացնելու նրբ որ երկրի այդ մասը բնակութեան համար ազատ լալտարարեց՝ դորժ ստեղծեց շահադիտումներ անելու: Մի աննշան վճար հատուցանելով ամեն ոք դառնում էր սեփականատէր հողի մի մեծ կտորի: Յետոյ կազմուեալ է ապագայ քաղաքի լատակագիծը բոլոր մանրամասնութիւններով, որ և ի ցոյց է դրուեալ Նիու-Իօրկի հիւրանոցներում ուր ոտ են դնում գաղթականները: Լուրը տարածուեալ է, ծնուեալ է հաւատ, ժողովուեալ են շահադէտները և ահա հողի գինը բարձրացաւ: Օկլոհոմապի Գուլթրի քաղաքում մի տարուց լետոյ հողի քառակուսի մի մետրը արժէր 19 ֆր. բայց հէնց որ բնակիչների թիւը հասնում է 5—6000, ինչպէս օրինակ՝ Grand Forks'ում (Գակոտա), Fremont'ում (Ներբրասկա), Moorhead'ում (Միննսոտա) մի ոտնաչափի արժէքը դառնում է 100—200 դոլլար: Եւ այս բոլորի դուրս բերողը ամերիկական աշխարհահռչակ ուկլումն է. ամեն տեղ՝ երկաթուղում, հիւրանոցում գովուեալ է երկրի պտղաբերութիւնը, օգի առողջարարութիւնը, գետի խորութիւնը և խաղաղութիւնը: Նոր եղեմ, Քանսասի երկիր, աշխարհքի սերը. ահա այն անականները, որ շուրջուեալ են առատութեամբ այն հողերին, որոնցից գործնական ամերիկացին շահ է սպասում արժէքի բարձրանալուցը: Չարմանալին այն է, որ աջ ու ձախ գովեստներ շուրջողները իրանք էլ վերջ ի վերջոյ սկսում են հաւատալ իրանց ասածներին: Մարդ ակամայ վիշտ է Մոլլա Նասրէգիլին, որը տեսնելով որ իւր արձակած սուտը՝ թէ բազարում ձրի ձմերուկ են բաժանում լաջող հետեանք ունեցաւ— ինքն էլ կնոջից տոպրակ ուղեց և բազար գնաց՝ երևի ուղիղ է ասածս՝ մտածելով:

Մեծ քաղաքներին նմանելու ցաւով նորաստեղծ քաղաքն էլ շինում է ձիաքարչ երկաթուղի, որը սկզբում դարտակ է շրջում, լուսաւորում է իւր կելքտրական զնդով: Բնակիչները համերաշխ կերպով սոխատում են գեղեցկացնել ծառատունկերը, մի Pullman, մի Pilseney, մի Carneggie ¹⁾ նւիրում են քաղաքին մի եկեղեցի, մի համալսարան, մի հիւանդանոց: Ամերիկացին սիրում է իւր քաղաքը ալմպէս, ինչպէս որ մի գործարանատէր սիրում է իւր գործարանը. սկզբում՝ որովհետեւ նա հաւատում էր նրա ապագային, իսկ լետոյ որովհետեւ ուզում է մաս ունենալ նրա առաջանալու, նրա մեծանալու:

Աղդպէս են կազմուել Չիկագո'ն (խողակերտ!) իւր 1.200.000 բնակիչներով, Սեն Պօլը, Միննէպպոլիսը իւր 200.000 բնակիչներով, Օմահա'ն, Կանզաս—սիտի'ն, Դենվերը: Սրանք պահպանել են իրանց սկզբնական բնաւորութիւնը և շարունակում են մնալ կենտրոնատեղեր՝ Դենվերը—հանքերի համար, Չիկագո'ն, Օմահա'ն, Կանզաս—սիտի'ն—անասունների

¹⁾ Ամերիկացի մլլիանատէրեր:

(արջառի և ոչխարի) համար, Մինէպոլիսը և Սեն Պօլը—ցորենի համար-
Քաղաքը մեծացել է և նմանել մի մեծ գործարանի, ուր գործ ունին հացի,
մսի կամ հանքի հետ. բայց այդ քաղաքը նաև ամբար է: Ամբար և գոր-
ծարան—ահա քաղաքի լատկանիչները և, որպէս զի գործը լաւ և հեշտու-
թեամբ դնալ, քաղաքը պէտք ունի շատ ձիաքարչերկաթուղիների, տեղե-
ֆոնների, տեղեգրաֆների, հիւրանոցների, վերելնոցների¹⁾, երկաթու-
ղակին կապարանների և վերջապէս անթիւ լատարարութիւնների կախւած
երկաթէ թեւերից փողոցի լայնութեամբ: Չնայած իւր հսկայական հիւրա-
նոցներին, իւր տասնալարկ տների և երկքորական լուսաւորութեան՝ քա-
ղաքը մնացել է սալատակւած վալր ի վերու, չաւարտած և ողորմելի
տեսքով: Ո՛ւմ ինչ—միայն թէ մարդս արագ տեղափոխւել կարողանալ,
հնար ունենալով նաև իւր առևտուրի պատերները հեշտութեամբ տեղ
հասցնել: Սա գործ տեսնելու շինութիւն է, ուր բոլոր գրասենեակները
հաղորակցութեան մէջ են իրար հետ զանգակների միջոցով, ձայնատար
խողովակներով, տեղեֆոններով, վերելնոցներով, ճաշարաններով և զինեա-
ներով:

Անգործ մէկը, պարապ պտտող մէկը, եկամուտով ապրող մէկը—ձանձ-
րութիւնից կը մեռնի ալսպիսի մի քաղաքում, եթէ նա իւր համար որ և
է գործ գտնելու չլինի: Չձանձրանալու համար պէտք է ապրել տեղական
ամբոխի կեանքով, ամբոխի՝ որը առաւօտեան 7 ժամից բանի է. պէտք է
մտնել «բար»-ը, ուր ձեզ առաջարկում են մի «կլիկ լեօնչի»²⁾ բոլոր
կերակուրները, աչտեղից ցատկել մի ձիաքարչ երկաթուղու վրա, որից
մարդիկ կախուած են մեղրածանձերի պէս կաշիլով, ապա օգտւել վերել-
նոցից, որը ձեզ մի վարկեանում կը հասցնի ձեր № 1500 սենեակը մամ-
ուութի նման վիթխարի հիւրանոցի, ուր օգտուած են և մեքենայի և սևա-
մորթների ծառայութիւնից:

Ի՞նչ է և ի՞նչ բանի է ծառայում, օրինակ, Չիկագոն:

Չիկագոյի դերը կենդանիների մսից կոնսերւ³⁾ և մսավաճառի համար
միս պատրաստելն է: De Rousiers'ի ասելով՝ Չիկագոյում ամեն բան լաւ
է դնում, եթէ միայն միսը լաւ է դնում:

Չիկագոյի տեղագրական դիրքը շատ նշանաւոր է: Նա գտնուած է
եզրպտացորնն արտադրող նահանգների ծալրում. նրա միջով դէպի
Արևելք, դէպի Ամերիկակի խիտ բնակւած մասը և ալտոնից Նւրպա

1) Մի գործիք որ տեղափոխում է չարկերից չարկ հիւրանոցներում
և սահասարակ բազմալարկ շինութիւնների մէջ:

2) Առաջին խօսքը նշանակում է՝ արագ, երկրորդը նախաճաշ:

3) Կոնսերվ միսը մասամբ համապատասխանում է հպերիս դաուր-
մա ասած մսին:

պիտի անցնեն Արևմտեան նահանգների բոլոր արդիւնաբերութիւնները: Մի նեղուցով կապւած լինելով Միսիսիպի գետի հետ՝ նա տէր է դառնում մի ջրալին ճանապարհի, որ տանում է հիւսիսային Ամերիկայի մեծ լճերից (Միչիգան, էրիս, Օնտարիօ) դէպի Մեկսիկալի ծովածոցը: Յիշեալ լճերից մէկը, Միչիգանը, կապում է Չիկագո՞ն հիւսիս—արևմտեան նահանգների հետ: Չիկագո՞ն կենտրոն է ամերիկական երկաթուղիների ցանցի, որ ցրւում է չորս կողմ ճառագայթների պէս 51 երկաթուղային գծեր, որոնք պատկանում են 32 ջոկ ջոկ ընկերութիւններին: Շատ հաւանական է որ շնորհիւ իւր այս գիրքին Չիկագո՞ն կը դառնալ շուտով Ամերիկայի մալրաքաղաք, մինչդեռ Նիւ իօրկը միայն գլխաւոր նահանգիստն է, ուր խմբւում են գաղթականները: Առ ալժմ սակաւն Չիկագո՞ն պահպանում է իւր պարզ բնականիչ գծերը:

Նա չունի բազմազան արդիւնագործութիւններ, — ձուլարաններ, մանարաններ. կենտրոն լինելով հանդերձ՝ նա իւր մէջ շոգեկառքեր չի պատրաստում: Իբրև նորաստեղծ մի քաղաք, որ ինքն իրան չի կարողանում զոհանցել, նա մնում է գլխաւոր գնորդ, սպառող արևելեան գործարանների: Նա մնում է միմիայն մսի քաղաք, Չիկագոյի հետ ծանօթանալու համար բաւ է երեք այցելութիւն:

Առաջինը, Նալեցէք երկաթուղային կալարանների մօտ գտնուող («ստոկ—հարդ»-ն երին¹⁾)—աչն տեղերը, ուր պահւում են անասունները: Սրանցով է սկսւում մսի քաղաքը աչնպէս՝ ինչպէս որ հացի քաղաքը սկսւում է էլեւտորով: Նկատեցէք այս տեղերի աղտոտ, մերկ և անսահման տարածութեան վրա փուած լինելը, նկատեցէք կալմերի անտառի նմանող հեռադրական սիւները և երկաթաթելերի ցանցը, նկատեցէք թէ ինչ կոպիտ, անտաշ տախտակներով և բիրտ ձողերով են բաժանւած զանազան մասերի աչ՝ անասուններով լի վայրերը: Կոպիտ, անտաշ, վալր ի վերու բաւց հահալին մի տարածութիւն, ուր ոչնչից ոչինչ չի երևում՝ բացի տախտակներից, ցցերից, սիւներից և անասուններից:

Նրկրորդ այցելութիւնը անելու համար հարկաւոր է պինդ սիրտ ունենալ: Փորձեցէք մտնել «պակլին հաուա՞ր»՝ Նալեցէք այս շինութեան երկարաձիգ, ծխից սևացացած պատերը, մէջը եղած երկաթուղային նեղ գծերը, շատ գնալ գալուց խոր ընկած ճանապարհները, սրա լրացուցիչ աչն բաժինը ուր շինւում, պատրաստւում են թիթեղեալ արկղիներ և տակաւներ և սպանդանոցները շրջապատող գրասենեակները: Փորձեցէք մի րոպէ տանել աչն անախորժ հոտը, որ շոգիի պէս դուրս է ցատում ախոռներից, սպանդանոցներից և ամենաչն ծակ ու ծովից: Զգուշ կացէք եղներից, որոնց մտրակի՛ զօրեղ հարւածներով քշում են՝ դէպի մի նեղ

¹⁾ stock=պաշար, yard=բակ:

անցք, որի ծալրում զրանց սպասում է կռանի հարածը, Նալեցէք թէ ինչպէս այդ սպանած եղծերին ընկղմում են հուացող ջրով լի աւազաններին մէջ, ապա ինչպէս, հանելուց չետու, նրանց մաքրում են խողանակով ¹⁾, ապա հանում կաշին, ապա կտոր կտոր անում, ապա եփում, ապա կախ տալիս ձխի մէջ և ապա տեղատրում արկղների մէջ, Նալեցէք այս խառն ի խառն իրար վրա դրած փայտեղ կամուրջներին, հեռագրական սիւներին, խռնած տախտակամած շինութիւններին, սալատնէրին, այս մեծ դաշլիճներին, ուր մարդիկ քալում են արիւնոտ տղմի մէջ, նալեցէք այս կորիզորներին, ուր երկար երկաթէ ճանկից կախած խողբը մի ճախարակի (poulie) օգնութեամբ սահում են մինը միւսի լետեից ու մորթում, լւացում, կորսում, քերում և այլն, Նալեցէք այս սպիտակամորթ և սևամորթ մշակներին, որոնք կաթսաների կծու գոլորշիների մէջ կորած, մի ժամում սոլորած իրանց կատարելիք գործը օրեր շարունակ 3—3 միատեսակ գործողութիւններն են կատարում կացնի, բոլորածն սողցի, բեռները վեր-վար հանելու գլանի (treuil) ձեռ:

Մնաց երրորդ այցելութիւնը, Գնանք տեսնենք թէ ինչպէս են պատրաստում աչի իրերը, գործիքները (matériel roulant), որոնցով փոխադրում է այս պատրաստի միտը, Գնացէք Պուլմանի գործարանը, որը ամեն մի քառորդ ժամում պատրաստում է մի վագոն փոխադրող իրերի և դուք աչի ժամանակ մի ամփոփ դաշափար կոնսենանք այս պարզ, անպաճօճ և հսկայ աշխարհի մասին:

Հսկայական են «տոկ և արդ»-երը, «պակին հառուս»-երը, Պուլմանի գործարանները, հսկայական, բայց պարզ և անպաճօճ են այս բոլոր շինութիւնները, գործարանները, որոնք թէև կառուցած են շտապով, կոպիտ, բայց չարմար:

Աւ ինքը քաղաքն էլ սրանց է նման. քառակուսի վերամբարձ տներ, ուղղանկիւն ի փողոցներ, տասնաչարկ բանկեր և հիւրանոցներ, բոլոր ընակիչները մի արհեստի, ամենքը սղողար հօտե տե րո՛ններ ²⁾, մի կրթութեան, միակերպ հագուստով, համանման շահարով, բայց ամենը հոկայ ծաւալով: Ամեն անգամ երբ եւրոպացին կանգ է առնում որ և է ամերիկական արդիւնագործական ձեռնարկութեան առաջ, որ և է շինութեան, հիւրանոցի, շոգեկառքի, ճաւի, կամուրջի առաջ, կամ զիտում բորսայում եղած որ է շահադիտութիւն (спекуляція)—ինչքան հսկայական և ինչքան անպաճօճ—անա աչի խօսքերը, որ արտասանում է եւրոպացին: Այո, միմիայն այդ երկու խօսքերը՝ հսկայական և անպաճօճ...

Ֆ.

(Կը շարունակվի)

1) ШЕТА.

2) Գողար որսողներ: (Գողարը ամերիկական դրամական միւստրն է, ինչպէս Ռուսաստանում ռուբլին, Ֆրանսիայում ֆրանկը և այլն: